

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ՀՈԳՈՒ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ Վ.ՇՈՒՇԱՆՅԱՆԻ «ՍԻՐՈ ԵՎ ԱՐԿԱԾԻ ՏՂԱՔԸ» ՎԵՊՈՒՄ

ՆԵԼԼԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Վ. Շուշանյանն այն սփյուռքահայ արվեստագետներից էր, ով անձամբ անցել էր Հայաստանի գրեթե բոլոր ճանապարհներով և այն էլ սովի ու համաճարակի պայմաններում: 1920-ական թթ. Արմաշի երկրագործական վարժարանի սանը իր նման երիտասարդների հետ Հայաստան էր եկել ոգևորությամբ, երկրին ծառայելու ցանկությամբ:

Հայաստանում և առհասարակ Կովկասում նրա անցկացրած օրերը գեղարվեստական մարմնավորում գտան «Սիրո և արկածի տղաքը» ինքնակենսագրական վեպում, որն առաջին անգամ լույս է տեսել 1929թ. Բոստոնի «Հայրենիք» ամսագրում:

Վեպի գլխավոր հարցադրումը կենսական է դառնում մի ամբողջ սերնդի համար. ո՞րն է իրական հայրենիքը. ծննդավայրը, որ այլևս կորսված է, թե՞ այս փոքրիկ հողակտորը, որին ոչ միայն փորձում էին ապավինել, այլև նեցուկ դառնալ դժվարին պահին: Սակայն միայն արկածների մեջ թրծվելով են հերոսները հասկանում, որ իրենց երազած հայրենիքը օտար է իրենց համար:

Իրականում ի՞նչ կատարվեց. ինչո՞ւ նրանք եկան և վերադարձան (ըստ էության դա վերադարձ չէր, այլ փախուստ): Հայաստանը, թվում էր, պիտի վերջնական հանգրվան լիներ, սակայն մղեց նոր տարագրության:

«Սիրո և արկածի տղաքը» վեպը մեր առջև նրբորեն բացում է ժամանակի քաղաքական ներհակ իրադարձությունների վարագույրը: Վեպի գլխավոր հերոսների «արկածների» միջոցով Վ. Շուշանյանը, թեև գեղարվեստական մատուցմամբ, սակայն ճշմարտացիորեն նկարագրում է Հայաստանում տիրող տրամադրությունները: Երվանդը (որը հենց ինքը հեղինակն է) և Վահրամը միասին են անցնում բոլոր փորձությունների միջով, կիսում մի կտոր հացը, անգամ գողություն անում երկուսով: Շատ ջերմ և զգացմունքային է երկու ընկերների մտերմությունը: Նշենք, որ գրականագիտության մեջ հաստատված փաստ է, որ Վահրամի նախատիպը բանաստեղծ և արձակագիր Լևոն-Չավեն Սյուրմեյանն է: Կերպարների ընտրությունը պատահա-

կան չէր. Վ. Շուշանյանը և Լ. Զ. Սյուրմեյանը սովորել էին Արմաշի երկրագործական վարժարանում, միասին եկել Հայաստան:

Ավելորդ չէ այստեղ նշել, որ հայաստանյան իրադարձությունների վերլուծությունը առաջինը կատարում է հենց Լևոն-Զավեն Սյուրմեյանը. վերադառնալով Պոլիս՝ «Ճակատամարտ» թերթում հրատարակում է «Մեր օրերը Հայաստանի մեջ (ինչպես գացինք ու դարձանք)» գրությունը (1921), որտեղ առանց գեղարվեստական խճողումների թղթին էր հանձնված Հայաստանում իրենց հետ կատարվածը:

Ե՛վ Լ. Զ. Սյուրմեյանը, և՛ Վ. Շուշանյանը տագնապով էին արտահայտվում երկրում պատերազմական իրավիճակի, քաղաքական խմորումների մասին. «Մենք ալ աղքատ ու վտիտ էինք: Հայոց աշխարհի դաժան ճակատագիրը զարկած էր մե՛զ ալ, մեր պարանոցներէն: Մենք ալ կիսամերկ ու անսուաղ էինք: Քաղցի երկար ու դժնէ օրերը գողցած էին մեր առողջութիւնը, եւ բո՛լորս ալ, որք էինք ու պանդուխտ. շատ մը պզտիկ տղաք, մեր իսկ հայրենիքին մէջ: Ու անօթի»¹: Անապատի ավազների միջով անցած որբերին նոր փորձություններ էին սպասում հայրենիքում: Սոված ու կիսամերկ ստիպված են լինում անցնել Հայաստանի ճամփաներով և դիմակայել սառնաշունչ ձմռանը: Սակայն իրական մղձավանջը սկսվում է այն պահից, երբ հասկանում են, որ նոր իշխանությունը բնավ էլ չի պատրաստվում զբաղվել «դաշնակ լակոտների» ճակատագրով, այլ ընդհակառակը՝ նոր արկածների է ենթարկում նրանց՝ ընդհուպ մինչև բանտարկություն: Վ. Շուշանյանի գրիչը շատ դիպուկ է ներկայացնում այդ դրվագը, սակայն առանց չարության ու մեղադրանքների. «Համայնավարները կ'անցնէին թեւ թեւի երիտասարդ հայուհիներու հետ՝ երգելով «Միջազգայնականը»: Ռուս զինուորներ մեզ կ'առաջնորդէին բանտ: ...Յանկարծ աղջիկներու եւ տղոց բազմութիւն մը խուժեց վրանիս: Աղջիկները մեզ կ'անարգէին «Դաշնակ լակոտներ» եւ այլ բացագանչութիւններով: Կը նետէին ծիւնագնդակներ մեր գլուխներուն, իսկ մենք կը նայէինք ծարաւով անոնց սեւ ու անուշ հայու աչքերուն ու ժպտուն՝ ձեռքով համբոյրներ կը դրկէինք իրենց»²:

Արկածները շարունակվում են և Բաթումում, որտեղ օրվա ապրուստը հոգալու համար ընդունում են պարսիկների առաջարկը և աշխատում նրանց

¹ **Շուշանեան Վ.**, Սիրոյ եւ արկածի տղաքը, Պէյրութ, 1957, էջ 6: Shushanean V., Siro ev arkaci tghaqy, Peyrut, 1957, ej 6:

² Նույն տեղում, էջ 28:

պարտեզում: Այս «հանդգնությունը» պատճառ է դառնում, որ նրանք նորից հայտնվեն բանտում, իսկ հայ համայնավարը, օգնության ձեռք մեկնելու փոխարեն, չի հապաղում հայտարարել, որ «թունավորված» երիտասարդներին պետք է վերադարձնել Հայաստան, նորից բանտ նետել, որպեսզի սովորեն «Միջազգայնական»-ը, այսինքն՝ ընդառաջ գնան համայնավարներին:

Երվանդը խոր ցավով է տեսնում, թե ինչպիսի ոգևորությամբ էին իր հայրենակիցները դիմավորում օտարի գալուստը, տոնում Մայիսի մեկը, և չի կարողանում զսպել հեգնանքը, որի հետևում միաժամանակ վիրավորանք ու ատելություն էր թաքնված. «Լենին կ'իշխեր բազմութեան վրայ: Անոր հասակը առնուազն իրականին կրկինը պետք է ըլլար: Անոր դեմքը կ'արտայայտեր մեծ որոշում մը ու նաեւ զօրաւոր, անյաղթելի ու ահաւոր կամք մը՝ այդ որոշումը կեանքի կանչելու համար: Անոր ճակատագրական ու մարգարէ բազուկը կ'երկարէր դէպի ապագան:

...Այսուհանդերձ, երիտասարդի ուշադրութենէս չէր վրիպեր այդ հսկայ նկարին խեղկատակ հանգամանքը»³:

Սակայն, հարցը միայն քաղաքական ենթաշերտերով չի սահմանափակվում. Վ. Շուշանյանը ներկայացնում է ժողովրդի երկու հատվածների միջև առկա մշակութային խոր անջրպետը. երկրում տիրող ծայրահեղ աղքատությունը մարդկանց ստիպել էր դառնալ եսակենտրոն, անկախության խորհուրդը կորցրել էր արժեքները: Արևելահայության աչքին արևմտահայերից շատերը «պուրժուա, Դաշնակ ու շովինիստ»⁴ են: Վ. Շուշանյանի ու իր ընկերների համար սրված էր, ընդգծված՝ տեսակը պահպանելու բնագործ. չէին կարող համակերպվել օտար մշակույթին ընդառաջ գնացող մտայնություններին: Նրանք ջերմություն ու նվիրում էին փնտրում, բայց փոխարենը քաղում էին անարգանքի և նվաստության պտուղներ. իրենք «պանդուխտ տղաք էին» իրենց հայրենիքում:

Երկու արժեհամակարգերի միջև առկա սահմանագիծն ավելի է խորանում և այլևս անհնար դարձնում արևմտահայ երիտասարդների մնալը նոր, բայց խորթ Հայաստանում: Այստեղից էլ ծնունդ է առնում վեպի մեկ այլ առանցքային խնդիր՝ հայրենիքի ընտրության հարցը: Այստեղ հերոս-հեղի-

³ Նույն տեղում, էջ 129:

⁴ «Ճակատամարտ» օրաթերթ, Կ. Պոլիս, Շաբաթ, 11 Յունիս, 1921 թիվ (779-2600):

նակը վստահաբար հայտարարում է. «Հայաստանը դարձած է կրկին Ռուսաստան. մենք ալ որոշեցինք վերադառնալ մե~ր Հայաստանը»⁵:

Շուշանյանը և իր բախտակիցները նախապատվությունը տալիս են «աննյութականին»՝ «Մշակութային Հայաստանի» խորհրդին. ճանապարհը մեկն էր՝ ապավինել ոգեղենին: Լավագույն ելքը մնում է փախուստը, ինչը դեպի արևմտահայ ինքնությունը վերադարձի արժեք ունի: Հայրենիքից փախուստը հեշտ չի տրվում հերոսներին. նրանք հեռանում են՝ կարոտը և ավստանքը կրելով իրենց մեջ: Շուշանյանը խոր զգացմունքայնությամբ է գրում տառապալից այդ հեռացումի մասին. «Չկրցանք մեր անտառներուն մանիշակները հոտոտել, քաղել զանոնք, դնել մեր լամբակներուն ու ուրախանալ գոնէ մեր ապաբախտ երկրին ծաղիկներովը: Ուշ գիշերին փախանք գող մարդոց պէս, ես ու ան, երկու պզտիկ տղաք, կծկուած աղտոտ երկաթուղակառքի մը անկիւնը, կորսուած մեր յիշատակներուն խորը...»⁶:

Արմաշի երկրագործական վարժարանի սաների վերադարձը Պոլիս բոլորովին այլ տեսանկյունից է մեկնաբանում գրականագետ Գեղամ Սևանը, որը հերոսների փախուստը պայմանավորում է Դաշնակցության հետ ունեցած ոչ միաշերտ հարաբերությամբ. «Շուշանյանը պատկերում էր Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո առաջին ամիսների շփոթը՝ կատարվածից ոչինչ հասկացող պատանիների սրտում ու ուղեղում, պատանիներ, որոնք բերված էին արտասահմանից՝ «դաշնակցական» լիքքավորմամբ, և դեպքերի բերումով այժմ դիմում էին փախուստի, խուճապահար փախուստի դեպի ետ, անկասկած «վերին կարգադրությամբ»⁷:

Գ. Սևանը չի վարանում դաշնակցության հագուստ ձևել պատանիների վրա՝ կամայական փոփոխության ենթարկելով վեպում առկա փաստերը: «Սիրո և արկածի տղաքը» վեպի գլխավոր հերոսներից և ոչ մեկը դաշնակցական չէր, ավելին՝ հերոս-հեղինակը նույնիսկ դառնությամբ և հեգնախառն անդրադարձում էր. «Երբ Հայաստան եկանք, հակադաշնակցական էինք, Ձեր

⁵ **Շուշանեան Վ.**, Սիրոյ եւ արկածի տղաքը, էջ 27: Shushanean V., Siro ev arkaci tghaqy, ej 27:

⁶ Նույն տեղում, էջ 45:

⁷ **Սևան Գ.**, Վազգեն Շուշանյան, Երևան, ԳԱ հրատ., 1968, էջ 70-71: Sevan G., Vazgen Shushanyan, Yerevan, 1968, ej 70-71:

Հայաստանի ընկերները մեզ դաշնակցական շինեցին...»⁸:

Հապա ո՞ր մնաց «դաշնակցական լիցքավորումը» և ինչպիսի՞ «վերին կարգադրություն» կարող էր լինել որևէ կուսակցության չպատկանող երիտասարդներին: Գեղամ Սևանը հավատացած է, որ երիտասարդները տրվել էին սին խոստումներին և չկարողանալով հասկանալ, թե իրականում ինչ էր կատարվում, պարզապես ընկել էին արկածների հետևից. «Չհասկացան, դեպքերի խորքը չկարողացան թափանցել երվանդները, վահրամներն ու արշակները և զոհ դարձան»⁹: Հետաքրքրական է, թե ինչ խորքի մասին է փորձում բարձրաձայնել հեղինակը: Ի՞նչը պիտի հասկանային քաղցած ու սովի մատնված երիտասարդները, որոնց առանց խղճի խայթի բանտարկում էին, անպատվում: Գ. Սևանը իրադարձությունների մեկնաբանության իր տրամաբանությունն ունի, որով փորձում է «սքողել» ժամանակի սխալները. «...դերերի մի այլ դասավորմամբ կարող էր և Երվանդը այդ աղջիկներին ու տղաներին անվանել «դաշնակ լակոտներ»¹⁰:

Նշենք նաև, որ Գեղամ Սևանի այս թյուր գնահատություններին է անդրադարձել նաև սփյուռքահայ գրականագետ Պողոս Սնապյանը: «Սրբապիղծներուն գրոհը» վերնագրով հոդվածում նա մեկ առ մեկ թվարկում է ճշմարտության դեմ մեղանչած արձակագիր-քննադատի դատողությունները՝ մասնավորապես ուշադրությունը կենտրոնացնելով այն հատվածներին, որտեղ խոսքը դաշնակցության մասին է: Գեղամ Սևանի այն համոզմունքին, որ այս սերունդը, մնալով երկրում՝ ապահով ձեռքերի մեջ, կստեղծագործեր, կդառնար սիրված և զոհ չէր գնա «սպիտակ ջարդին», Պողոս Սնապյանը միանգամայն իրավացիորեն հակադարձում է՝ երկրում մնացածների ճակատագիրը մատնացույց անելով. «Երկիրը բոլորովին չգրկելու համար «ստեղծագործող սիրուած գրողներ»է, վերին կարգադրութիւններ ընողները հոն ձգեցին Չարենցը, Բակունցը, Թոթովենցը, աւելի դեռատիներէն՝ Մահարին, Նորենցը, Մկրտիչ Արմէնը, ուրիշներ: ...Ի՞նչ եղաւ սակայն «Հայրենի երկրում» մնացած

⁸ **Շուշանեան Վ.**, Սիրոյ եւ արկածի տղաքը, էջ 179: Shushanean V., Siro ev arkaci tghaqy, ej 179:

⁹ **Սևան Գ.**, Վազգեն Շուշանյան, էջ 77: Sevan G., Vazgen Shushanyan, ej 77:

¹⁰ Նույն տեղում, էջ 76-77:

գրողներուն ճակատագիրը: Սիրուած գրողներ եղան անոնք, «Հայրենի երկրում», թէ հոգիով ու մարմնով սրածուած գրողներ»¹¹:

Այն, որ Հայաստան եկած տղաները մեծ սիրով և պատրաստակամությամբ էին եկել՝ պատրաստ ծառայելու իրենց անկախ հանրապետությանը, վկայում է նաև վարժարանի մեկ այլ սան՝ Լ. Զ. Սյուրմեյանը. «Առաջինն է՝ ընդհանուր, որ վազեցինք դէպի մեր սրբազան հողը, պատրա՛ստ անոր համար զոհուելու, որպէսզի ան իսկապէս ամենքիս պատիւ բերող Հայ երկիր մը ըլլայ, եւ ոչ թէ համաշխարհային պրօլետարիատի յաղթանակի նշանաբաններով ու ռուսական ԺԱ զօրաբանակի մը տակ ընկճուած ու գերի Հայաստան մը: Մենք Պոլիս վերադարձանք նկատելով, որ մենք ալ անխուսափելիօրէն զոհ պիտի երթայինք այն տասնեակ հազարաւորներուն հետ, սովէն ու հիւանդութենէն ընկճուած...»¹²:

Երվանդ-Շուշանյան հերոսը ընտրության խնդրի առջև է կանգնում նաև սիրո աշխարհում: Նշենք, որ Շուշանյանի բոլոր հերոսներն արդէն առաջին հայացքից սիրահարվում են, ինչը թույլ է տալիս հեղինակին գործողության սկզբից մինչև վերջը հերոսներին պահել գերլարված զգացմունքային դաշտում: Հենց այդ դաշտում էլ հայտնվում է Երվանդը Թիֆլիս հասնելուն պես:

Հայրենիքում նա հասցնում է սիրել և անգամ ատել, հիասթափվել, բայց և կարողանում է ընդառաջ գնալ սիրուն և փողոցի «դեգ» տղայից բարձրանալ մինչև «սրտի իշխանի բարձր գահին»: Ծանր հոգեբանական երկվություն է ստեղծված հերոսի համար. մի կողմից՝ օտարացած հայրենիքը, իսկ մյուս կողմից՝ իրեն սիրով փարված արևելահայ աղջիկը: Իհա՛րկե, սերը հիմնավոր պատճառ է, որ հերոսը հետ կանգնի իր վերադառնալու որոշումից, աղջիկը նաև խոստանում է փակված դռներ բացել տղայի առաջ՝ ապահովել, օգնել շարունակելու ուսումը և ի վերջո վերագտնել կորցրած տան ջերմությունը, սակայն Երվանդը չի ընկրկում: Հզոր է սերը, բայց իր մեջ նույնքան տոկուն է արևմտահայը:

Ընտրության հիմնահարցը շատ ավելի ուժեղ երանգ է ստանում՝ ելնելով հերոս-հեղինակի մտածողության յուրահատկությունից: Վ. Շուշանյանի սիրերգությունը երկու՝ երագի և իրականության հակասական քննոններում է. մի կողմից կինը երագ է և «անմատչելի», իսկ մյուս կողմից՝ սիրո և կրքի հորձանուտում թրծված: Այս երկակի մոտեցումը մենք առաջին անգամ տեսնում

¹¹ Սնապեան Պ., Կրկեսին մէջ, հատոր երրորդ, Երևան, 2005, էջ 176: Snapean P., Krkesin mej, hator 3, Yerevan, 2005, ej 176:

¹² «Ճակատամարտ», Կ. Պոլիս, Շաբաթ, 18 Յունիս, 1921, թիւ (785-2606):

ենք «Առաջին սերը», «Մահվան առագաստը» ստեղծագործություններում, ինչը, փաստորեն, իր շարունակությունն է գտնում «Սիրո և արկածի տղաքը» վեպում:

Սիրո դաշտում Վ. Շուշանյանի այս երկատվածությունն իրավացիորեն նկատում է նրա գրական աշակերտ, բանաստեղծ Մուշեղ Իշխանը. «Վ. Շուշանյանի սերը գրեթե միշտ հոգեկան վերացումի ձգտող եւ մարմնական հեշտանքի ցանկութեան հետ միաձուլուող ապրում մըն է ...Գերզգայուն այս գրողը կեանքին կէսը ապրեցաւ կարծեմ սիրոյ ընկալումին հասուննալու համար, միա կէսն ալ՝ զայն որոնելու, գտնելու եւ անոր տիրապետելու ցանկութեամբ»¹³: Արփիկը Երվանդի համար երազ աղջիկն է. հերոսը մարմնականից առավել կարևորում է հոգիների միակցությունը: Ըստ Երվանդի՝ սերը հավերժացնելու միակ ձևը կրքի ճանապարհը փակ պահելն է: Հենց այս պատճառով է, որ տղան չի ցանկանում առարկայացնել աղջկան և մերժում է նրա համբույրը՝ հակառակ, որ տենչում էր:

Սփյուռքահայ գրագետ Հարություն Պերպերյանը, իհա՛րկե, նկատելով Շուշանյան-Երվանդ սերտաճումը, հերոսի երկատվածությունը պայմանավորում է նրա «կրավորական» լինելու և աղջկա՝ համարձակ խառնվածք ունենալու հանգամանքով. «Երուանդ Շուշանյանի նոյն պատանի-երիտասարդ վիպապաշտ ու կրաւորական հերոսն է, որ առաջին յանդուգն արտայայտութիւններէն ետք, երբ յարաբերութիւնները կը լրջանան, կը քաշուի իր պատեանին մէջ: Իսկ Արփիկ նախաձեռնող աղջիկն է, որ անգամ մը վստահութիւն տաձելէ ետք սիրած տղուն նկատմամբ, չի վարանիր զայն առողջ կերպով դրսեւորելէ»¹⁴: Նշենք, սակայն, որ Շուշանյան հերոսի «պատեանին մէջ ներքաշուելու» պատճառը բնավ էլ «կրավորականությունը» չէր, այլ Շուշանյանի այն մտայնությունը, թե սերն ավելի զորեղ է, երբ հիշատակ է դառնում: Ի դեպ, այս նույն նրբերանգներով է հատկանշվում Վահան Թեքեյանի «Քու յիշատակդ այս գիշեր» բանաստեղծության կառուցվածքը:

Արփիկը այլևս ձուլված է հերոսի էությանը, և այս է պատճառը, որ երկարատև բաժանումից հետո հերոսը նույն հույզերով է կանչում իր երազ-

¹³ «Քազին» ամսագիր, Իբ տարի, թիւ 1, Յունուար 1983, Պէյրութ էջ 7-8:

¹⁴ Նույն տեղում, էջ 64:

աղջկան, ինչպես «...բոյնէն՝ պանդուխտ ու թաց հողին վրայ վիրատու ինկած Վարուժանը՝ կը կանչէ իր Մարիին»¹⁵:

Շուշանյան հերոսը կանգնում է երկու ճակատագրական ընտրությունների առջև՝ հայրենիք և սեր, ու մնում է հավատարիմ իր ներքին «ես»-ի թելադրությանը, եթե անգամ հարկ է զոհել ամենաթանկը: Փարվելով Հոգևոր Հայաստանին, մերժելով առարկայականը, օտարը, սխալ ընտրությունը՝ արևմտահայ մտավորական սերունդը հավատում էր Հայաստանի հոգևոր, մշակութային շարունակականությանը՝ այն վստահությամբ, որ հենց իրենք են առաջինները. «...առաջիննե՛րը պիտի ըլլանք մայր երկիր հեփհեփ վազող»¹⁶:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոգվածում քննվում են սփյուռքահայ արձակագիր Վազգեն Շուշանյանի «Սիրո և արկածի տղաքը» վեպի հարցադրումները, որոնցից առաջինը հայրենիքի ընտրության խնդիրն է: Վեպի հերոսները չեն հաշտվում օտարացած Հայաստանի հետ և նախընտրում են Հոգևոր, Մշակութային հայրենիքը:

Մյուս հարցադրումը վերաբերում է սիրո ընկալմանը, որտեղ հերոս-հեղինակը ֆիզիկականից առավել կարևորում է հոգիների միասնությունը:

Երկու ճակատագրական ընտրությունների առջև՝ հայրենիք և սեր, Շուշանյան հերոսը մնում է հավատարիմ իր ներքին «ես»-ին:

Բանալի բաներ - գրականագիտություն, Վազգեն Շուշանյան, սփյուռքահայ գրող, «Սիրո և արկածի տղաքը», ինքնակենսագրական վեպ, հերոս-հեղինակ, հայրենիքի ընտրություն, հոգևոր, մշակութային հայրենիք:

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ВЫБОРА МЕЖДУ РОДИНОЙ И ДУШОЙ В РОМАНЕ В.ШУШАНЯНА “ПАРНИ ЛЮБВИ И ПРИКЛЮЧЕНИЙ”

НЕЛЛИ ТАДЕВОСЯН

В статье анализируются основные положения романа прозаика армянской диаспоры Вазгена Шушаняна “Парни любви и приключений”.

¹⁵ **Շուշանեան Վ.**, Սիրոյ եւ արկածի տղաքը, էջ 193: Shushanean V., Siro ev arkaci tghaqy, ej 193:

¹⁶ «**Ճակատամարտ**» օրաթերթ, Կ. Պոլիս, Շաբաթ, 18 Յունիս, 1921, թիւ (785-2606):

Первой проблемой является выбор родины. Герои романа не смиряются с отчужденной Арменией и выбирают Духовную, Культурную родину.

Следующая проблема касается восприятия любви, в которой автор-герой придает большее значение духовному единению, чем физическому.

Перед роковым выбором между родиной и любовью герой-Шушанян остается верным своему внутреннему “Я”.

Ключевые слова - литературоведение, Вазген Шушанян, писатель армянской диаспоры, “Парни любви и приключений”, автобиографический роман, автор-герой, выбор родины, Духовная родина, Культурная родина.

THE PERSISTENT PROBLEMS CONCERNING THE CHOICE BETWEEN HOMELAND AND SOUL IN V. SHUSHANYAN'S NOVEL “THE BOYS OF LOVE & ADVENTURE”

NELLI TADEVOSYAN

This article studies the issues in Shushanyan's novel, “The Boys Of Love And Adventure”. The first concerns the choice of Homeland. The heroes of the novel do not cope with Armenia from which they feel alienated. They rather prefer a Spiritual and Cultural Homeland.

The other relates to the perception of love, where the author-hero gives more importance to the unification of souls than to the corporeal one.

Faced with two major choices between Homeland and love, the Shushanyan-hero eventually remains faithful to his inner “self”.

Key words - literary criticism, Vazgen Shushanyan, western Armenian writer, “The Boys of love and adventure”, autobiographic novel, author-hero, choice of Homeland, Spiritual, Cultural Homeland.